ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ հուլիսի 2026 թվականի №___-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի №463-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի փետրվարի 12-ի №148-Ա որոշման հիման վրա ստորագրված «Հայաստանի Հանրապետության և «Որոտանի հիդրոէլեկտրոկայանների համալիր», «Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ», «Քոնթուրգլոբալ Տերրա Հոլդինգս Էս-Ա-Էր-Էլ», «Սի-Ջի Սոյյուշնս Գլոբալ Հոլդինգ Քոմփնի» ընկերությունների միջև 2015 թվականի հունիսի 8-ին կնքված գույքի առուվաճառքի պայմանագրում լրացումներ կատարելու մասին» №2 համաձայնագիրը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի №520-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի սակագները սահմանելու, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի №447-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №463-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.
   1) Որոշման 1-ին կետի 1-ին՝

ա. ենթակետի «բ» պարբերությունում «դրույքը» բառից հետո լրացնել «2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2026 թվականի հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածի համար՝» բառերը,

բ. ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» պարբերությամբ.

«գ. հզորության դրույքը՝ 2026 թվականի օգոստոսի 1-ից սկսած՝ 2665.91 դրամ/կՎտ՝ յուրաքանչյուր ամսվա պայմանագրային պատրաստական հզորության համար՝ առանց ավելացված արժեքի հարկի.».

2) Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում «դրույքը՝» բառից հետո լրացնել «2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2026 թվականի հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածի համար՝» բառերը, իսկ «հարկի» բառից հետո՝ «, 2026 թվականի օգոստոսի 1-ից սկսած՝ 4.942 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի» բառերը.

3) Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությունում «դրույքը՝» բառից հետո լրացնել «2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2026 թվականի հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածի համար՝» բառերը, իսկ «հարկի» բառից հետո՝ «, 2026 թվականի օգոստոսի 1-ից սկսած՝ 6.914 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի» բառերը.

4) Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրակայանից առաքվող (վաճառվող) էլեկտրաէներգիայի սակագինը՝

ա. 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2026 թվականի հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 15.127 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի,

բ. 2026 թվականի օգոստոսի 1-ից սկսած՝ 17.967 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.».

5) Որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություններին առաքվող (վաճառվող) էլեկտրաէներգիայի սակագինը՝

ա. 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2026 թվականի հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 10.055 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի,

բ. 2026 թվականի օգոստոսի 1-ից սկսած՝ 5.234 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.».

6) Որոշման 5-րդ կետում «հետաձգման արդյունքում 12.3 միլիարդ դրամի չափով ձևավորվող լրացուցիչ եկամուտ» բառերը փոխարինել «հետաձգում՝ 6428 միլիոն դրամի չափով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից յոթնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի օգոստոսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
__ հուլիսի 2026թ.